§ 13. Խ: Վերև արդէն տեսանք, թէ ինչպէս այս ստոր զօկերէնում երբեմն յառաջանում է +ից (որ մին—ուխման, իք մին—էխման), բայց մի և նոյն օրինակներէց մենք տեսնում ենք, որ այդ +ից յառաջացած Խ յետոյ փոխվում է հ (ուհման, էհման): Բայց ոչ միայն այս դէպքում +ից յառաջացած Խ, այլ և բուն Խ Ազուլխի բարբառում շատ ժամանակ փոխվում է հ, ինչպէս ապացուցանում են մեզ բազմաթիւ օրինակներ. դլուխ—ազ. գլլուհ (ցղն. կլուխ), ծախել—ծահլի (ցղն. ծախիլ), խազող—հազող, խազ—հազ, իոխել—կահլի (ցղն. իոխիլ), իոխել, կախ տալ—կոհ տալ (ցղն. կոխտալ), խրատ—հրոտ (ցղն. խրոտ), մոխիր—մոհիր (ցղն. մոխիր), և այլն: Ինչպէս տեսնում ենք Չօկ բարբառի այս օրէնքից բացառութիւն է կազմում Յղնեցոց լեզուն, ուր Խ—ի հ փոխվելը տեսնում ենք միայն այն ժամանակ, երբ նոյն բառի մէջ կայ ղ ինչպէս՝ խազող—ազ. և ցղն. հազող, խազ—ազ. և ցղն. հազ, և այլն. Վարբազցոց լեզուում նոյնպէս հազող, հազ¹⁾: Նոյնպէս Արեւանցոց բարբառում՝ հաւող: Հարկաւոր է նկատել որ ղ իւր արտասանութեամբ շատ ժամանակ խառնվում է Խ—ի հետ ինչպէս գրականական լեզուում նոյնպէս և շատ բարբառներում, որոնց մէջ է և զօկերէնը: Արբարե, եթէ բուն Խ Ազուլեցոց բարբառում բաց մեծի մասին փոխվում է հ, գորտ փոխարէն Չօկերի արտասանութեան մէջ շատ ժամանակ լսում ենք Խ, ուր գրականական լեզուում եթէ չ'է էլ արտասանվում գոնեա զրվում է ղ օրինակ՝ թուղթ—զօկ. թօխտ, աղջիկ—ախլիկ, աղքատ—ախքատ, եղբայր (աղբար)—ախպար, և այլն: Բայց մենք տեսնում ենք երբեմն և հակառակը, այսինքն Խ արտասանվում է ղ օրինակ՝ խանձիլ—զօկ. զանձիլ, և այլն, բայց դա շատ սակաւ է պատահում:

1) Պատկ. Исаявд. о діал. Армян. яз. Կր. 65:

Ծանօթ. Չօկերէն (Ազուլխի) լեզուի այս յատկութիւնը, այն է՝ Խ—ի հ փոխվելը բոլորովին հակառակ է այն երևոյթին, որ բաւականին տարածված է մի քանի հայ բարբառներում. այս վերջիններում ընդհակառակը շատ ժամանակ հ դառնում է Խ. օրինակ, Չօ—զէցոց բարբառում՝ խայ (հայ), խայ (հայ), խետ (հետ), շխաւոր (շորհաւոր¹⁾), և այլն. Մէջոց բարբառում՝ խարցուց (հարցուց), խասաւի (հասաւ²⁾), խանից (հանեց). Խոյեցոց բարբառում՝ խանեց, պախելիս, խասաւ, ևն:

§ 14. հ: Այս ստոր բացի իւր սեպհական գործածութիւնից և այն դէպքերից, ուր, ինչպէս վերև տեսանք, յառաջացած է լինում Խ—ից, զօկերէնում մենք շատ ժամանակ տեսնում ենք *—ից և ց—ից յառաջացած. ց—ի հ փոխվելը մինչև անգամ մի մշտական և հաստատ օրէնք է կազմում բայերի վերաբերմամբ, այսինքն ժամանակ կազմող ց (Անցիալ Անդունելութեան մէջ) զօկերէնում միշտ փոխվում է հ. օրինակ՝ մոռացել—զօկ. մոհալ, նեղացել—զօկ. նղահալ, կարգացել—ազ. կրգահալ—ցղն. կլրթահալ, մտրկացել—ազ. մտրկահալ, և այլն: Ինչ վերաբերում է *—ի հ փոխվելուն, մենք տեսնում ենք այսպիսի օրինակներ՝ ա—«իլ—զօկ. ահիլ³⁾, տանել—ազ. տահիլ—ցղն. տահալ (կայ նոյնպէս—ազ. ախիլ—ցղն. տահալ): Այս օրինակների թուումը յիշելու է և Ազուլեցոց հօհ գերանունը, ուր հ անշուշտ փոխվել է *—ից, իսկ *—ից (ինչպէս միավանկ բառում), ուրեմն հօ (ի)—սա (ի):

1) Պատկ. ibid. Կր. 82:
 2) Պատկ. Исаявд. о діал. Арм. языка Կր. 103—104:
 3) Հայոց լեզուի իրանականութիւնը պաշտօնաբար լեզուագէտները ՚ի միջի այլոց աւել բառի մէջ s մտնում են *—ի տեղ դրած (Մանսիր. s=Իրան. s), այնպէս որ Մանսիր. ah=հայ. asel, որը փոխարկված է իր թէ asel—ից բայց այդ ենթադրութիւնը թէ Հայոց asel բառի s յառաջացել է *—ից հերքում է սրօթ. Պատկանանք յառաջ բերելով զօկերէն լեզուի այս մէր (ահիլ), որ Մանսիրիտի h—ի տեղ տեսնում ենք նոյնպէս h: Паткановъ. О яѣствъ, занимаемомъ Армянскимъ языкомъ въ кругу Индо-Европейскимъ. 1879 года, стр. 12—13.

Մասնով. Եթե զիմենք Շրօղերի հարգողած հաստատման մենք կր տեսնենք որ այն ժամանակուց (18 դ.) Ազուլեցոց բարբառին զևս յայտնի չէ «—ի հ փոխելը, այնպէս որ մենք կարգում ենք՝ նասում, ասա, նասիլ ՚ի տեղե պոժման՝ նահամ, ահա, նահիլ: Կարելի է Շրօղերը սխալ է հարգողում մեզ, բայց կարելի է նոյնպէս որ ճշմարիտ այն ժամանակուց Ազուլեի լեզուն չք զիտեր զևս «—ի այլպիսի փոփոխումը, այս վերջին ենթադրու թիւնը թիւ շատ հասանական կարող է լինի և այն պատճառով որ 1) միւս օրինակում՝ պոլներն՝ փոխել բառում զօկերէնում մինչև պոժմ էլ հ—ի հետ միասին գործ է անում «, պոլներն Ազուլեցիք ասում են՝ տիհնիմ և տիմիմ (նոյնպէս Յզնեցիք՝ տեհնում և տենում), մինչև անգամ «—ով աւելի գործածական է. 2) Յզնեցոց լեզուում պոժմ գործ է անում, ճշմարիտ է, ահիլ, նահամ, կայլն, բայց մի և նոյն ժամանակը գործածական է և ափիլ, նասում, կայլն և այս վերջին ձևը (պոլներն «—ով) առանց բացառութեան գործածական է, այլ որ մարդկանց և պատահանաց ու Ազուլեցոց հետ երբէք յարաբերութիւն հունեցողների լեզուում:—Այս վերջինների լեզուում (անու անենք այդ՝ հին ջղնեցերէն) մենք նկատում ենք նոյնպէս մի ուրիշ հետ թիւն. մենք տեսնում ենք որ ոչ էլ չէ փոխում հ Անցեալ Վեդունելու թեան մէջ. ուրեմն ՚ի տեղե Ազուլեցոց և նորագոյն ջղնեցերէնի նրզահամ, մահամ, գլխահամ, կայլն մենք լսում ենք զևս նրզացամ, մացամ, գլխացամ, են:—Շրօղերի յիշեալ օրինակների մէջ կատարելի է նոյնպէս Ազուլեցոց լեզուի վերաբերմամբ «—ձ վերջաւորութիւնը նասում՝ բացի մէջ:

Արջուպէս հ—ի վերաբերեալ նկատելու արժան է նորա գործածութիւնը զօկերէնում ինչպէս հարցալ՝ բառի սկսում. օրինակ՝ ընկեր—զօի, հինգիլ, այլ որ—հրսն ուր, արբիլ (հարբիլ)—աղ, հարբիլ—ցղն, հարբիլ: Չայնուօրով սկսուող բառերի սկսումը երբեմն այլ հ—ի աւելանալը իբրև հարցալ՝ յատուկ է ոչ միայն զօկերէնին, այլ և ուրիշ հայ բարբառներին, և զա շատ յաճախ պատահում է, Վարարացոց և Զուզեցոց բարբառներում. օրինակ՝ Վարար, հինչ (ինչ), հու (ու), հիլ (երբ), կայլն, մինչև անգամ այժմեան

զրականական լեզուում գործածական է զատած՝ հալար և ատաւել հարբիլ:

§ 15. յ: Հայոց լեզուի այլ ասար, ինչպէս յայտնի է, իւր արտասանութեան համար սրոշում է երկր զերբ՝ բառի սկսում, միջում և վերջում. բառի վերջում մը նա չէ, արտասանում (1), բառի միջում արտասանում է ինչպէս և բուպական յ, իսկ սկսումը արտասանում է ինչպէս հ (կ): Բայց այս վերջին արտասանութիւնը համեմատաբար աւելի նոր երևոյթի հարկաւ որ է համարել՝ այլ ասար աւելի հին, սկսնական արտասանութիւնը եղել է յ, որին նա նման է և իւր արտաքին կերպարանքով: Արդարև այլ ասար սկսողական յ արտասանութիւնը հաստատում է այլ ասար յատկաւ թիւնը բառի միջում և վերջում. այլ հաստատում է նոյնպէս և յատուկ անունների արանակրիպցիան՝ Յու լիանո—Julianus և այլն: Բայց եթէ Հայոց լեզուն (զրականական) այժմ կրցրել է յ արտասանութիւնը բառի սկսում (2), Ազուլեցոց բարբառում բնդհականակ շատ յաճախ լսում ենք յ բառի սկսում, օրինակ՝ յիտք (կտք, յիտք), յունց (անց), յրբիկ (երբիկ), յրմանիլ (խմանալ), և այլն: Յզնեցոց լեզուն այս գեպքում՝ երբեմն հետևում է Ազուլեի բարբառին և պահում է բառի սկսին յ, օրինակ՝ յրմանայ, յոնս (ուս), յոնք (ունք, յոնք), և այլն, երբեմն փոխում է յ, օրինակ՝ յիտք կամ կտք—աղ, յիտք—ցղն, յիտք, անց—աղ, յունց—ցղն, յունց, և այլն: Աւրեմն Ազուլեի լեզուն

1) Անն մի քանի մասնակ բառեր, որոնց վերջում արտասանում է՝ այն էլ ինչպէս և բուպական յ, բայց մայ, հայ, կայլն:
2) Արջն է—ի վերջ մնացել է այլ յ: Ինչպէս յայտնի է է բառի սկսումը երբէք չէ արտասանում է (օ), այլ արտասանում է միշտ յ: Զուկերնը բնդհականակ բառի սկսումը երբէք յօ չէ գործ անում կամ արտասանում է (օ) կամ փոխում է ուրիշ ձայնաւորի (§ 2):

պահել է մեզ յ—ի գործածու թեան հետքերը հայոց լեզու ի մէջ: Ապայոյց թէ այդ հնչիւնը (յ) մի ասանձին՝ օտար բան չէ այլ նոյն չ է իւր սխրեական արտասանու թեամբ, մենք տեսնում ենք նորանում որ այդ օտար աւերանում է բառի վերայ՝ նորա սխրից զանազան բարբառներում է արտասանվում է չ այնտեղ, ուր գօհերէնք (զլետա որապէս այդ լեզերէնք) արտասանվում է յ, օրինակ հէնց նոյն բառը՝ յունց (անց) ցղնեցերէնում արդէն արտասանվում է յունց, ասած — ճ ու վեց, յաս էջ—գօհ, յաս աջ, էզու ց—ճ ու զ յկու ց—ապ, յօզն ց, և այլն:

§ 16. Միւս բաղաձայնների մասին ասանձին խօսելու հարկ չը կայ՝ նոքա կամ մնում են անփոփոխ կամ թէ ևն թարկվում են շատ չնչին փոփոխու մների: Մենք կը նշանակենք այստեղ միայն մի քանի ասանձին գէպեր: ՚ փոխվում է շ—Արդերական հրամայականում օրինակ՝ մի գրից—գօհ գլրիլ մնն, մի խօսից—ապ, խուսիլ մնն—ցղն, խօսիլ մնն, ևն: Այդ երևոյթը, այսինքն հրամայականի այդ ձևում ՚—ի շ փոխվելը յատուկ է ոչ միայն գօհերէնին, այլ և շատ ուրիշ հայ բարբառների արևելեան ճիւղի, այնպէս որ բաւականին յաճախ արտահայտում ենք գրականականում անպամ՝ մի գրիլ ՚ի տեղի մի գրիլ, և այլն: շ փոխվում է շ՝ աջք—ցղն, օշի, աշքի—աշկի, ասածք—ասաշի, և այլն: ալ փոխվում է ճ՝ այսպէս—ապ, ասմաս, պիտի, պէտք է—ապ, մնտիլ, մնտամմ այ—ցղն, մէտիլ, մտում այ: Յղնեցերէնի ձևը (մէտիլ, մէտում համ. Ղարար, պէտիլ, պէտում այ) նոյնպէս ասմաս բառի մէջ ճ—ի ալ—ից յասածացած լինելը սպայտցանում են այն ենթադրու թեան անհասանականու թիւնք, իբր թէ մնտիլ=մարթիլ¹⁾: Համեմատ. Ռուսաց (с)МОТ-

1) Прав. Маса, о діал. Арм. яз. Ірես 41:

рѢТЬ — լեհաց, — patrzec, համ. նոյնպէս մարդ—յունար, — μορτός ՚ի տեղի μορτός, իսկ այս վերջներ ՚ի տեղի μορτός = mortuus¹⁾. Յուն. μορτοι — հայ. քիւր. Յուն. ρώμη — լատ. robus: Յ երբեմն փոխվում է զ արձակ—ապ, սնգանի (процотривши, ցղն, արգանի), արձակիլ—բրգակիլ, խուրձ—հօրզն—ցղն, խօրզն:

§ 17. Խօսելով բաղաձայնների յատուկ թիւները վերայ, չէ կարելի ասանց ու շարու թեան թողնել նոյնպէս երկու երևոյթ բաղաձայն աստերի գործածու թեան մէջ գօհերէնում՝ աստերի տեղափոխու թիւնք և զ ու ֆ աւերանար բառերի միջում արտասանու թեան յարմարու թեան համար:

1. Տաւերի փոխափոխութիւնք, օրինակ՝ պատր — պտտու գ, տիանջ — անգու ճ, սխտար — ապ, էլտաւր — ցղն, օխտար, թուրք — ապ, քօրպ, ցղն, քօրթ, ձղիլ (զղիլ) — ապ, դիձիլ — ցղ, քլիլի, և այլն: Այդ տեղափոխու թիւնք յատուկ է ոչ միայն գօհերէնին այլ և ուրիշ բարբառներին, ուր մենք նոյնպէս յաճախ տեսնում ենք աստերի և վանկերի տեղափոխու թիւնք, օրինակ Ղարար, սխմար, անգու ճ, մնան (նման), միհար (համար), և այլն: Այդ երևոյթը այնքան սովորական է հայոց լեզու ու մ (բարբառներում), որ մինչև անպամ նոյնք յաճախ տեսնում ենք և գրականական լեզու ու մ, օրինակ Գեղն որ յասածացիլ է յԳեղն—ից, կարպեա—կապերտ, զգալ—զգալ, և այլն: Այդ երևոյթը յատուկ է և ուրիշ լեզուներին, օրինակ՝ սուս. падомь—дѣань, և այլն:

2. զ ու ֆ փոխանարք քաւի միջո՞ճ կի՛թնիկական յարմարու թիւները համար մենք տեսնում ենք հետևեալ օրինակներում: ծանր—գօհ, ծունդր, ծունր—ծունդր, մանր—ապ, մանդր, այնոր (էնոր) — ապ, անգուր — ցղն, բնդնր այսոր

1) Сопр. Западн. ерса. համ. I, § 183 б, I համ. II, § 498:

(էտոր) ադ. — աստուր — յգն. բասուր, և այլն: Կնչպէս աեսնում ենք այս օրինակներէց՝ աւերացած *դ* և *ֆ* գնվում են ն և ջ, « և ջ մէջ և մի և նոյն ժամանակը նկատելու է որ ն — ից յետոյ գնվում է *դ*, իսկ « — ից յետոյ գնվում է *ֆ*: Ահատելու է նոյնպէս որ այդ *դ* և *ֆ* գնվում են ոչ միայն այն ժամանակ, երբ ն — ից կամ « — ից յետոյ գալիս է *ֆ*, այլ մինչև անգամ այն ժամանակը երբ այդ ն — ի և ջ — ի մէջ անգում կայ մի ուրիշ ձայնաւոր, օրինակ՝ Էն — ո — ր (էն — դ — ո — ր) — ադ. ան — դ — ո — ր, ջդ. բնդնւր, էս — ո — ր (էս — ա — ուր) — ադ. աստուր կամ մինչև անգամ երբ ջ էլ չը կայ. օրինակ Էնդ — ոնք, էստոնք և այլն: Այս, երեոյթը մենք աեսնում ենք նոյնպէս ուրիշ հայ բարբառներում, օրինակ՝ Վարարադցոյ ¹⁾, և ուրիշ լեզուներում. համեմատիք, օրինակ՝ Ուուսայ սամի. п — д — правъ, с — т — правъ, с — т — правеніе ՚ի անդի правъ, срамъ, сраженіе, և այլն. Յուն. ἀνίρ Սեուսի. ἀν — δ — ρός Տրակիան. ἀν — δ — ρι, πόνις և π — τ — όλις (Համեր), πόνιμος և π — τ — όλιμος (Համ), և այլն: Հարկաւ որ է նկատել նոյնպէս ք — ի մաները ճ և ջ մէջ բառի արասանում թեան յարմարութեան համար, օրինակ՝ համարել — շատ հայ բարբառներում. համ — բ — արել, — գօի. հրմ — բ — արիլ. համ. Չուդ. ամ — բ — րել = ամբրայնել ²⁾:

Սորանով վերջացնում ենք գօհերէնի աստերի նոյա արասանութեան և փոփոխումների հետազոտութիւնը և զխնւմ ենք նոյն բարբառի քերականութեան ձևերի հետազոտութեան:

1) Патр. Иссл. о діал. Арм. яз. Էրևն 69:

2) Патр. ibid. Էր. 83:

Պ Լ Ո Ի Խ III.

Ք Ե Բ Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն:

§ 18. Այժմ մի բնագիտութեամբ հայեացք դրելու լինենք Հայոց արզլի գրականական լեզուի վերայ, մենք կը աեսնենք որ այդ լեզուն Հունի քերականութիւնն բառի այն նշանակութեամբ, ինչպէս մենք սովորաբար հասկանում ենք, մի և նոյն քերականական, օրինակ, վերջաւորութեան համար զանազան ձևեր, այդ ձևերի կամուտը բնարտուութիւն և գործածութիւն՝ ահա այն յատկութիւնը, որ մի անորոշ և անհաստատ կերպարանք է տալիս նոր հայերէնի քերականութեանը: Հայոց քերականութեան այդ ստատուութիւնը յուսահատեցնում է շատերին, որոնք գրաւիած լինելով ուրիշ լեզուների քերականութեան կանոնաւորութեամբ և միաձուլութեամբ, մտանում են որ նոյն այդ լեզուները իրանց գոյութեան սկսում են նոյն գրութեան մէջ են գտնվում եղած, ինչ գրութեան մէջ գտնվում է այժմեան Հայոց գրականական լեզուն. այդ լեզուն գտնվում է գեա իւր մտապահ հասակի մէջ, չէ ասպրիլ գեա այնքան և այնպիսի հանգամանքներում, որ կարողանայ արզլն ներկայացնել մեզ մի կանոնաւորված և մշակված քերականութիւն:

Պրականական լեզուի քերականութեանը նայած չէ հարկաւ որ կարծիք որ նոյն գրութեան մէջ պիտի լինին և բար-

բաաների քերականութիւնները մինչդեռ գրականական լեզուի քերականութիւնը գրողների միջոցով ենթարկում է բարբառների ազդեցութեանը, և կախված լինելով գրողի կամ քիչ և ընարողութենից, ենթարկում է նոյնպէս և Հին լեզուի քերականութեան ազդեցութեանը, — բարբառների քերականութիւնները ազատ են այդ բոլոր անյարմարութիւններից, և թէև չեն մշակված—նոյ է մինչև այժմ մասձեղ բարբառների քերականութեան վերայ — այնու ամենայնիւ ամեն մէկը ստանձին՝ իւր սեպհական կեանքով ազդելով՝ յաստի և բերում իւր բնաւորութեան յատուկ քերականութեան կանոններ և կանոնաւորութեան քերականական կրեյթներ՝ ինչքան որ հաստատ և որոշ կարող է լինել կենդանի լեզուի և բարբառի քերականութիւնը: Այդպէս է և զօկերկնի քերականութիւնը, որի ձևերի հետ մենք այժմ կաշխատենք ծանօթացնել ընթերցողին:

Լ Ա Ն Ո Ւ Ն :

§ 19. Աղղական հոլով: Աղղակի Աղղական հոլովը ստանձին վերջաւորութիւններ չունի, որոնցով կարելի լինի վճնել ինչպէս այդ տեսնում ենք ուրիշ լեզուներում, թէ բառը այս կամ այն տեսակ պիտի հոլովվի: Կնչպէս յայտնի է, հայերէն մի բառ հոլովելու համար հարկաւոր է խնայել ստաճուց նորա Անասկանը, երբեմն և Վործիականը: Միայն մի քանի դէպքերում Աղղականը վճնում է բառի հոլովումը, ներկայացնելով իւր վերջին վանկով մի որոշ վերջաւորութիւն. այդ դէպքերն են Աղղականի (Ը)ն- և ի վերջաւորութիւնները: Անհ հայերէնում մի քանի ուրիշ դէպքեր էլ բաց խօսքին ընդհանուր հայերէնի վերայ չը լինելով, կը բառականաբար այստեղ եղակի Աղղականի այս երկու վերջաւորութիւններով:

որոնք զօկերկնի հոլովման համար նոյն նշանակութիւնը ունին, ինչ նշանակութիւն որ ունին գրականականի համար:

Նշանակ. Ըն- — ի արտասանութեան, երբեմն Ըն- փոխվելու և շեշտի մասին տես § 4, ծան. 3, § 8:

Յոգնակի Աղղականը ունի մի քանի վերջաւորութիւններ, այս, էք, է, աք, ուք, անք, արք, անք (էանք): Այս վերջաւորութիւններից պրօք. Պատկանեանք յիշում է միայն այս (անք), ընդունելով նորան իրան ընդհանուր վերջաւորութիւն ստահասարակ յոգնակի Աղղականի ¹⁾, որի տեղ նորա կարծելքով ²⁾, երբեմն գործ է ածվում նոյնպէս նէք, է, արք: Մենք այս բապիւն կը տեսնենք որ այդ վերջաւորութիւններից ամեն մէկը ունի իւր գործածութեան տեղը և մշտական օրէնքը:

1. այ: Յոգնակի Աղղականում այս վերջաւորութիւնը ընդունում են բոլոր ճապակի և բաղաձայնով վերջացող բառերը, օրինակ՝ բառ—յոգ. Աղղ. բառար ³⁾, սօր (սար)—սարար, քօր (քար)—քարար, և այլն: Այս օրէնքին չեն հետևում այն միաբանի բառերը, որոնք սկսվում են երկու բաղաձայն տատելով մի և նոյն է՝ բնական լինին դոքա թէ ձայնաւորի կրօնելուց յաստաճացած. թօր (թուր)—աղ. թերկ, կուվ (կով)—կվեր, դրօկ—դրօկներ (կրակ), ձրօղ—ձրօղներ, և այլն: Վիտակելու արժան է, որ ցննեցիւր, որոշում է այն դէպքը, երբ բառի սկսում երկու բաղաձայն պատահում են իրար՝ ձայնաւորի կրօնելու պատճառով, այն դէպքից, երբ բառի սկսում երկու բաղաձայնները բնական են: Յոգնակուց լեզուն, ստում ենք, որոշում է այդ երկու դէպքերը իրարից և որոշում է

1) Парк. Иаца. о діал. Арм. III. кр. 42:
 2) Ibid. кр. 43, ծանօթ. 3:
 3) Այստեղ կրկին յիշում ենք, որ ինչտեղ շեշտ չենք նշանակած, այնտեղ շեշտ գնելու է զօկերկնի շեշտողութեան օրէնքին համեմատ. § 8:

նորանով որ առաջին գէպքի համար, հակառակ Ազգայնացի լեզուին, պահում է (կանոնադրապէս) այ վերջապետութիւնը, որ, թոր (թուր) — ցր. թրար, կով — ցր. կիսար, և այլն, մինչդեռ երկրորդ գէպքի համար, ինչպէս և Ազգայնացի բարբառը, գործ է ածվում էր վերջապետութիւնը, օրինակ՝ կրակներ — ցրն. կիրակներ, ճրօքներ, և այլն: Այ վերջապետութեան մասին, որ հաւասար է գրականական էր և որը չենք պատահում ուրիշ զօհիրէնին հարեան բարբառներում տեսնոյնպէս § 2: Ահապէտ արժան է այն, որ Ազգական յոյն, կազմելու համար այ վերջապետութեան և բառի արմատի մէջ չ'է միանում ն' ասոր, ինչպէս որ մանում է էր վերջ. և արմատի մէջ (—ն—եր). Այ միայն մի բառ, որ բնորոշում է ն' այ — ի և արմատի մէջ (—ն—ար), այդ է՝ հօր (հար), որ կազմում է Ազգական յոյնակի՝ հար—ն—ար, բայց և այդ բառի համար էլ ոչ սակաւ գործածական է հար—ար: Յիշելու է նոյնպէս որ (ոս) բառը, որի յոյն. աղուր. աս—ն—ար, այս վերջին ձևը միակն է և մշտականը ցրնեցիրէնի համար:

2. էր (—ն—եր): Այս վերջապետութիւնը փոխարինելով չին + գործ է ածվում այժմեան գրականական լեզուում շատ քիչ բացառութեամբ իրրե միակ վերջապետութիւն յոյնակի Ազգականի. նոյնպէս և զօհիրէնում տեսնում ենք նորան իրրե ամենայնաձև գործածվող վերջապետութիւն յոյն. Ազգականի, միայն թէ զօհիրէնում նորա գործածութիւնը այնքան բնագարձակ չ'է, ինչքան գրականականում: մինչդեռ այս վերջեւում՝ մասամբ բնականաբար, մասամբ շինծու կերպով՝ էր, ինչպէս ասացինք, փոքրիկ բացառութեամբ համարեա միակ վերջապետութիւն է կազմում, յոյնակի Ազգականի համար զօհիրէնում գորա գործածութիւնը սահմանափակվում է այն գէպքերով, որ վերջիշեալ միւս վերջապետութիւնները անգի չ'ունին: Աւրեմ որոշել թէ ինչ գէպքերում է գործածվում

էր վերջապետութիւնը կարելի է միայն այն ժամանակ, երբ յիշվին բոլոր այն գէպքերը, որոնց մէջ գործածական են մնացեալ վերջապետութիւնները: Ահա գրականը արդէն մի գէպք, որ էր չ'է գործածվում, այլ գործ է ածվում այ. մի և նոյն տեղում մենք պարզ տեսնում ենք, երբ էրնգ հակառակը այ ի տեղ գործ ածվում էր: Ինչ վերաբերում է ն' աստին, որ մանում է կրկն բառի արմատի և էր վերջապետութեան մէջ, զօհիրէնում դա ոչինչ բացառական գէպքեր չ'է ներկայացնում մեզ գրականականին և ուրիշ բարբառների համեմատած. այլ բնգ հակառակը կարելի է մի օրէնք գտնա բերել, որ բնգ համար է, առաջինին և վերջիններին, այն է՝ կիմ, միաբանի բառը իւր կզակի Ազգականում սխալում է կամ վերջանում է կրկն բազմայն աստերով ¹⁾, այն ժամանակ արմատի և էր վերջապետութեան մէջ մանում է ն' ասոր, օրինակ՝ արեխ—յոյն. արեխներ—այ. արեհ—ն—եր, ցրն. արեխ—ն—եր, զլախ—յոյ. զլախ—ն—եր, սպ. զլախ—ն—եր, ցրն. կլախ—ն—եր, և այլն, իսկ բազմաբանի բառերի յոյնակում այդ ն' մշտական է, պատկեր—ն—եր, աշակերտ—ն—եր, ևն: Յ. 4: Յոյնակի Ազգականի այս վերջապետութիւնը գործ է ածվում այն բառերի համար, որոնց կզակի Ազգականը վերջանում է ձայնադր աստով: Այլ օրէնքին ամենահաստատ կերպով հեռում են կ—ով վերջացած անունները, օրինակ՝ Ազգայնացի—այ. բլլլրսնցի—յոյն. բլլլրսնցի, ցրն. բլլլրսնցի—յոյ. բլլլրսնցի, թձնամի—թձնամի, ասարի—ասարի (—իր վերջապետ. արատ. լը) § 12):

1) Արդ հետեւ կրկն բազմայնների մէջ բառում է կիտայն Ը, որեմն այդ միտին գրված էրկու բազմայնները կէս փանկի նշանակութիւն անին (կէս կամ աս—լ փանկ), այդ պատճառով այդ օրէնք անունները մէկ ու կէս փանկ անեցող անուններ են անտանձում Այսինքն. Մենական բերականութիւն արդի հայերէն լեզուի Անուն. 18 և ճանօթ:

4. աս, սո: Եյս կրկու վերջաւորու թիւնները յասաջացել են (է)ան+ վերջաւորու թիւնից: Կտակէս պատեղ յոչնաւորու վերջաւորու թիւնը + է, որը գնվում է գրականականում (է)ան վերջաւորու թիւնի վերայ, որից յասաջանում է (է)ան+: Կտակէս է մի կրկուցի՝ գծերէնս—ճ + — է ասաջ և միջոց կրկն—ճ է 1), ուրեմն ստանում ենք աս, որը կրկնին փոխվում է սո. աս — ի մէջ, որ յասաջացել է, ասում ենք, ան+ — [ւց, աս — լի օ — ի միջոցով սո փոխվելու մասին տես § 1: Աւրեմն սո+ վերջաւորու թիւնը կարող է յասաջացած լինել անվիճապէս և ան+ — [ւց. օրինակ՝ շատան+ — գօկ, շատսո+ — մերան+ — գօկ, միւրսո+ — Կայն: Աւրեմն զօկերէն այս փանկը պիտի պատահինք միշտ այնտեղ, ուր գրականականում տեսնում ենք (է)ան+, և արդարեւ բոլոր ազգանունները զօկերէնում վերջանում են աս, սո+, որ Համապատասխան է գրականական էան+ վերջաւորու թիւնը, օրինակ՝ Վարդանեանք — գօկ, Վարժանաք 2), Սարապեանք — Վարապեաք, Խաչատրեանք — Խաչատրուք, Պօղոսեանք — Պո զրասուք, Կայն, նոյնպէս խրեանք կամ խրանք — գօկ, յիրաք (խրանք), սորանք — գօկ, սրուք, գրանք — գրուք, նրանք — նրուք, Կայն: Կեչ վերաբերում է այն Հարցին, թէ կր է անունը վերջանում աս և կր սո+ այդ կախված է նորանից, թէ ինչպէս է վերջանում այն յասու կ անունի կախի Սեանականը, որից յասաջացել է ազգանունը, իսկ յասու կ անունի կց Սեանականը վերջանում է կամ այ կամ ճ (կարգաւ, ճ): Աթէ յասու կ անունի Սեանականը վերջանում է

1) Այդ մէք կը տեսնենք և բացերում և արիչ գեղարքում:
 2) Աւրեմն Հայոց ազգանունները մասին վեճակներէն էան վերջաւորու թիւնն սրաւորու արեւմտեան մի ազգացոյ աւել տեսն. էանց վերջաւորու թիւնը, այսինքն՝ նոր մարտ կց. Աւգ., Զօկերը բարբաթին չտեսն. իսկ այ և սոց որ պատահում ենք այդ բարբաթում կրկնք ստանց գրականի չեն գործ անվում (Վնտարնոց տարն — Գաղարկնց այսին Կայն), ուրեմն կազմում են մայն աս և սո+ Ազգականի Սեանականը:

այ, այդպիսի անունից յասաջացած ազգանունը վերջանում է աս, կթէ յասու կ ան. Սեա. վերջանում է ճ (օ) — այդ յասու կ անունից կազմված ազգանունը վերջանում է սո+: Աւրեմն Հարկաւ որ է իմանալ՝ կր է յասու կ անունի Սեանականը վերջանում է այ և կր ճ (օ), զորս մասին կը խօսենք ներքե (§ 20): Օրինակներ՝

սասջին գեղքի Համար (այսինքն՝ կր յասու կ անունի Սեանականը վերջանում է այ § 20, 4, 2):

յասու կ Վարդան — Սեա.	Վարդան-այ	—	ազգ.	Վարդան-ար
անուն՝ Հայրապետ	—	Հայրապետ-այ	—	Հայրապետ-ար
Բաղդասար	—	Բաղդասար-այ	—	Բաղդասար-ար

կրկրորդ գեղքի Համար (այսինքն՝ կր յասու կ անունի Սեանականը վերջանում է ճ (օ) § 20, 4, 2):

Ահուփ (Յակոբ)	—	Ահրփ — ճ	—	Ահրփ — ն.ք
	կամ Ահուփ — ճ	—		Ահուփ — ն.ք
Սարգիս	—	Սարգիս — ճ	—	Սարգիս — ն.ք
յգն. Սարբիս	—	Սարբիս — ճ	—	Սարբիս — ն.ք
Խաչատուր	—	Խաչատր — ճ	—	Խաչատր — ն.ք
Բայց	—	Խաչատուր — այ	—	Խաչատուր — ար
Բայց	—	Պիտրոս — ճ	—	Պիտրոս — ն.ք
Բայց	—	Պիտրոս — այ	—	Պիտրոս — ար, են.

Սոյն բանք Հաստատում են և վերե յիշեալ գերանունները յիր (կամ իւր) Սեանական. յի բան յոգ. Աւգգ. յիւր-ար կամ իւրան. (կամ իւր-ար (Համեմատիւր նոր Հայերէն իրայ) նո (նա) — Սեա. նրո (նրա) — յոգ. Աւգգ. նր-ն.ք, են.

5. Ասոխ+, անխ+, անխ, Էանխ: Եյս վերջաւորու թիւններից ամեն մէկը բազմապատ է կրկու մասից՝ ասի + ք, արի + ք, անի + ք, ան + ք, Էան + ք, որանից յոչնակի թիւն նշանը խկապէս + է, իսկ միս մասերը՝ ասի —, արի —, անի —, ան —,

հան—, այնպիսի վերջաւորութիւններ են, որոնք իրանք իրանց ստանց + — ի օգնութեան ցոյց են ապիւս աւարկայի բազմութիւնը, բայց ոչ այն բազմութեանը, որ մենք հասկանում ենք յոգնակի նշանակութեամբ, այլ հասարական մտքով: Թեև այդ վերջաւորութիւնները հասարական նշանակութիւն են ապիւս աւարկային, այնու ամենայնիւ մի քանիսը նոցանից, դոնեա զօկերէնում, երբեմն միակ վերջաւորութիւն են լինում մի քանի բառերի յոգնակի կազմելու համար: Վերևը այստեղ օրինակներ այդ վերջաւորութիւններից ամեն մէկի համար առանձին:

ա. անկէ+ — գրակ. արկէ+, որի * փոխակ է զօկերէնում ա՛ ոսկերտաի կամ ոսկերտաիք — զօկ. բակրատաի կամ բակրատաիք կողք (զօկ. կու դք) բառի համար զօկերէնում կայ՝ կու դք — արև կըզքը — ասի կամ կըզքրատաիք, և այլն:

բ. արկէ+ — գրական. արայ+ — արէ+, ուր * փոխակ է զօկերէնում ա, իսկ այ կամ է փոխակ է է՝ մի երևոյթ, որ բառակապակցի ասկաւ է պատահում զօկերէնում, և մինչև անգամ կարելի է ասել, հակառակ է նորա ոգուն. բայց այնու ամենայնիւ կան օրինակներ: Այդ վերջաւորութիւնը կազմված է նոյնպէս արի +ք. օրինակներ՝ ջուր, զօկ. ջուր (ցոյ. ձուր) — յոգ. ջրարի և ջրարիք, զիւր կամ զիւրք (ցոյն. կիւր, կիւրք) — յոգ. զրարի և զրարիք, զրքարի և զրքարիք, կտօր (կտուր) — կտօրներ, կարնարի և կարնարիք, և այլն:

գ. անկէ+ — գրակ. անկէ+. օրինակներ՝ կնիկ — ար. կնակի ցոյն. կնիկի — յոգ. կնակիք, տաւար — զօկ. տաւար — յոյն. արեքանիք, այդի — ար. էզի, ցոյն. էքի — յոգ. բզլրնանիք և բզլրնանի (ցոյն. բբլրնանի և բբլրնանիք), տանի — ար. տնոյ, ցոյ. տնոյ է՝ — յոյն. տնոյնանի, տնոյնանիք, և այլն: Վերջին եր-

1) Գ — Ի արտասանութեան մասին այս գեղարում տես § 11, ճանօթ. 1:

կու օրինակների մէջ՝ բզլրնանիք, տնոյնանիք, մենք պարզ նկատում ենք որ եզակի Աւգրականի վերջին ձայնաւոր (է՛ էզի, էքի. այ կարգա ա, տնոյ և ցոյն. է՛ տնոյ) կրճատվում է ք և արտասանութեան հետո օրինակի համար բառի արմատի և անկէ+ վերջաւորութեան մէջ աւերանում է ն՛ տնոյր — ն — անիք, բզլր — ն — անիք, և այլն:

դ. ան+, էան+. մի քանի միաբանի բառերի համար՝ զիւր կամ զիւրք — յոգ. ար. զլրնանիք, ցոյն. կլրնանիք, ձի — ար. ձիանիք, ցոյն. ծիանիք, ձու — ար. ձուի — յոյն. ար. ձիանիք, ցոյն. ծիանիք:

Նշուելու պահանջներն և ուրիշ բարբառներում այնպէս էլ զօկերէնում այս վերջին երկու վերջաւորութիւնները ստանց + — ի գործ չեն ածվում, մինչդեռ միւս վերջաւորութիւնները (տաիք, անիք, արիք) գործ են ածվում + — ոյ և ստանց + — ի. բայց և սոցա համար նկատելու է որ զլրնանիք և արիք յաճախ + — ոյ են գործ ածվում քան թէ ստանց + — ի. անկէ, ան, էան համեմ. պարսկ. յոգնակի կազմելու յ) — ի հետ: Այս բոլոր վերջաւորութիւնների մասին վերջապէս նկատելու է որ նոքա, մի քանի բառերի բացառութեամբ, միայն մի որոշ զոյն են ապիւս բառին (օրինակ՝ հասարականութիւն) և չեն սրբկում մի և նոյն բառերի համար ար, էք, + վերջաւորութիւնների գործածութիւնը, որոնք այնու ամենայնիւ մնում են յոյն. Աւգրականի համար իրանց կանոնաւոր գործածութիւնը և մշտական անգր ունեցող վերջաւորութիւններ: Վայց կան զօկերէնում մի քանի բառեր, որոնց յոգնակին կազմելու համար ար, էք, + հարկաւ որ չեն գալիս. օրինակ՝ կնիկ, ար. կնակի, ցոյն. կնիկի — յոգ. կնակիք, ձի, ար. ձի, ցոյն. ծի — յոգ. ձիանիք (ցոյն. ծիանիք):

§ 20. Արտական հոլով: Վերև (§ 19) մենք ասացինք թէ, հայցոյ լեզուի մի բառ հոլովելու համար բառ մեծի մասին հարկաւ որ է լուսնայ ստաճուց նորա Անտակներ, բայց այդ

կարելի է սահմանափակել Հին Հայերէնում՝ նոր Հայերէնում՝ արդէն Աւղղականը ըստ մեծի մասին միջոց է տալիս որոշել բառի հորիմանն եղանակը, բացառու թիւնները քիչ են, առաւել կէմէ ու շարքու թիւն չը գարձներ այն դուր ջանքերի վերայ, որոնք գեւ. այժմ ատարազգարար դորձ են գրվում երբեմն Հին Հայերէնի քերականական ձևերը զօտով պահելու կամ մոցնելու. այժմեան՝ գրականական լեզուի մէջ: Աւղղականը իւր այս դերը պարզ կերպով և մեծ հետեօգութեամբ կատարում է զօկերէնում: Եյս բարբառում Սեռական հորովը ունի մի քանի վերջաւորութիւններ, որոնցից ամեն մինի գործածութիւնը կարելի է պայմանաւ որկ Աւղղականով:

ա. Եզակի:

1. Եւթէ Եզակի Ուղղականը վերջանում է ի, Սեռականը վերջանում է ու, ինչպէս որ գրականականում և ուրիշ բարբառներում (1). օրինակ՝ թճամբի—թճամբու, զօկ. թճամբի—թճանամու, հոգի—հոգու, զօկ. հոգի—հոգու կամ հեղի—հեղու¹⁾, այգի—այգու, ագ. կգի—կգու, ցղն. էքի—էքու, ևն. է վերջացած յատու կ'անունները այս կանոնին չ'են հետևում:

Չանօշ. 1. Մարդ և Աստուած բառերը ինչպէս այժմեան գրականականում, այնպէս և զօկերէնում (ագ. մօրդ, ցղն. մօրթ, Աստուած, երբեմն կրճատված՝ Աստած, մինչև անգամ Ասված) Սեռականի համար ընդունում են նոյնպէս ու վերջաւորութիւնը՝ մարդու, Աստուծու—ագ. մարդու, ցղն. մարթու, Աստուծու, երբեմն Աստծու և Աստու: Մինչդեռ հարց բառը զօկերէնում (մօրդ, մօրթ) ատասանվում է իւր Սեռականում մարդու և մարդէ, (ցղն. մարթու, մարթի) մէջ, Աստուած բառը իւր Սեռականի համար բացի ու ուրիշ վերջաւորութիւն չ'ունի, իսկ գրականական լեզուում այդ երկու բառերի Սեռականն էլ տատանվում է գեւ. ոչ և ու մէջ, թէ և այս վերջինի յաղթանակը հեշտ է

1) Այդ բառի մասին տես § 9:

զու շակելն ինչպէս պատահել է ու—ով վերջացած բառերի Սեռականի մէջ, ուր ՚ի տեղի չ'են (—) ոչ այժմ մենք տեսնում ենք ու՝ թճամբի—թճանամու. իսկ կէմէ այժմ երբեմն գրում են թճամոյ, կկեղեցոյ¹⁾, կայլն, զա միայն աւելորդ հնապաշտութիւն է: Արեւմտ. ինչպէս տեսնում ենք բոլոր այս գեղերում չ'են Հայերէն ոչ նոր Հայերէնում փոխվում է ու. համեմատելը ըստ—ըստով, լուսա որել, կոյր—կորաւնալ, բոն—բան (ագ. բուն, ցղն. պուն), ծոյլ—ծուլանալ, զօկ. սպ. մնն (մին)—ցղն. մնն, կայլն:

Չանօշ. 2. Ու վերջաւորութիւնը տես նոյնպէս ներքև 4. 3:

2. Ուղղականում (Ե)եւն վերջացած բառերն Սեռականը վերջանում է (Ե)եան (II): Մինչդեռ գրականականում այս հորիմանն հետևում են բոլոր էւն վերջաւորութիւն ունեցող բառերը (նոյնպէս ուն, ու մն—Սեռ. ան), զօկերէնում այս հորիմանն հետևում են միայն Եեւն վերջացած անունները, օրինակ՝ հարբանութիւն Սեռ. հարբանութեան (արատասանվում է նոյնպէս հարբանութան), քանիրութիւն—քանիրութեան, ևն. բայց արիւն—արիւնի, անուն—անունի, և այլն:

Չանօշ. Եւթէ Եեւնը փոխվում է Եեւն (§ 4). այն ժամանակ Սեռակ. Եեւն վերջաւորութիւնը տեղի է տալիս Եեւնի, այսինքն՝ մի և նոյն վերջաւորութեան վերայ աւելանում է է վերջաւորութիւնը, որի հետևանքը լինում է այն, որ Եեւն փանկի մէջ էս փոխվում է է (§ 2): Եյս երևոյթը կարելի է յատկացնել համարեա միմիայն Յղնեցոյ լեզուին²⁾, ուր գուցէ Եեւն վերջաւորութիւնը մինչև անգամ աւելի յաճախ է գործածվում քան թէ Եեւն, թող լինի Աւղղականը Եեւն թէ Եեւն. օրինակ՝ կգօթի (գողութիւն)—Սեռ. կգօթեւնի, փսօթի—փսօթեւնի, և այլն:

1) Կամ տեղի յաճախ՝ թճամոյ, կկեղեցոյ:

2) Վրիժայն Յղնեցոյ տեղով էլ հարկաւոր մտանալ որ սցառող համեմատութիւնը անում ենք միայն Արարիկ լեզուի հետ. զօկերէնի ուրիշ բարբառների հետ գեւ. գործ է տեսնել:

3. Բայց յիշեալ երկու գէպերից և յատուկ անուններից, մասցեալ բոլոր անունները իրանց Աւարական—Վերջան—ձ և Ե (III): Այս հորովման հետեւում են ուրեմն բոլոր այն անունները, որոնք եզ Աւարականում մի որոշ վերջաւորութիւն չունին, իսկ յատուկ անունները իրանք իրանց արդէն որոշվում են. շա (շաա) — Աւո. շաաի, կատու — կատուի (արա. կատվի), և այլն:

Ծանօթ. Ինչպէս այստեղ, այնպէս էլ միւս գէպերի համար, նկատելու է որ ձայնաորով (կամ ա որ = ա) վերջացած անունները՝ հասարակ թէ յատուկ՝ ընդունում են միւս հորովների վերջաւորութիւնները (բայի յաբ. Աւղղ.) ոչ թէ աւելացնելով եզ Աւարականի ձայնաւորի վերայ, այլ նորա փոխարէն. օրինակ՝ եկեղեց — ի, Աւո. եկեղեց — ու, ըխօյ (արա. ըխօ — երեխայ) — ըխ — ի, ճընափա՝ ճընրփ — ի. Խաչի՝ Խաչ — այ, և այլն: Բացառութեան կարմում են գրականական յատուկ թիւն ունեցող բառերը, ինչպէս՝ վկայ (Աւղղ. շաա ժամ. վկայ արա. վիօ) — Աւո. վկայի, ծառայ — ծառայի. Բացառութիւն կարմում են նոյնպէս բոլոր ու վերջացած անունները՝ կատու — կատուի (կարգա՝ կատվի), Բարու — Բարուի (= Բարվի), և այլն:

4. Յատուկ անունների Անականը որոշելու համար հարկաւոր է՝ ի նկատի ունենալ նոցա այս երկու նշանակութիւններ 1) մարդու անունն 2) տեղի անունն:

1) մարդու անունն նշանակող յատուկ անունները վերջանում են իրանց եզ Անականում ա (արա. ա), որը փոխվում է օ (արա. օ), եթէ բառի շեշտը ընկնում է այդ վանկի վերայ: Համ. աչ հին հայերէնի՝ յաա. անուն. Ան աի. համար: Աւրեմն թէ որք այս երկու վերջաւորութիւններից պիտի գործ ածվի յատուկ անունի Անականի համար, այդ կախում է շեշտից և թէ Անականում բառի շեշտը անցնում է բառի վերջին վանկի վերայ գործ է ածվում օ (օ), եթէ ոչ՝ մնում է ա: Բայց ի՞նչպէս իմացվի թէ շեշտը Անականում վերջին վանկի վերայ է

թէ, ոչ: Ինչ թիւում է թէ, գորա համար մի այսպիսի օրէնք կարելի է գորա բերել. եթէ յատուկ անունի Աւարականում վերջին վանկում գտնվում է այս ձայնաւորներից մէկը՝ չ կամ « (բնական կամ « — ից յաս աջացած), Անականում շեշտը անցնում է վերջին վանկի վերայ, և ուրեմն վերջաւորութիւնը ընկնում է օ. իսկ եթէ Աւարականի վերջին վանկը պարունակում է « կամ է (այսինքն հնչիւն ւ) ձայնաւորներից մէկը, այն ժամանակ շեշտը չ' անցնում վերջին վանկի վերայ, և ուրեմն Անականի վերջաւորութիւնը մնում է ա. օրինակներ՝

- Սարգիս — Աւո. Սարգիս — օ, (կամ Սարգիս — օ).
- Պուգուս (Պոգուս) — Պուգուս — օ.
- Մկրտի (Յակոր) — Ակուտի — օ.
- Թմուսա (Թու մաս) — Թումաս — ա.
- Քասպար (Քասպար) — Քասպար — ա.
- Ռուբէն — Ռուբէն — ա, և այլն:

Թէ ինչ աստիճանն այդ վերջաւորութիւնները կախու մնան շեշտից, պարզ կրնու մէ նորանից որ մի բանի անուններ, որոնք իրանց Անականում ընդունում են օ, շեշտի յիշեալ օրէնքը խանդարվելու պէս (այսինքն՝ երբոր Անականում չ' անցնում վերջին վանկի վերայ) օ փոխում են ա. օրինակ՝

- Պիտրոս (Պետրոս) — Պիտրոս — օ, բայց՝ Պիտրոս — այ
- Ղեւտիս — Աւետիս — օ, բայց՝ Աւետիս — այ, և այլն:

Ծանօթ. 1. չ վերջացած յատուկ անունները ընդունում են կանոնաորակա յատուկ անունների Անականի յիշեալ վերջաւորութիւնները և ոչ « (ա. 1), և որովհետեւ այդպիսի անունները ընդունում են Անականի և միւս հորովների վերջաւորութիւնները ոչ թէ աւելացնելով չ վերայ այլ նորա փոխարէն (ա. 3), ուրեմն շեշտը կը մնայ այդ վերջաւորութիւնների վերայ, եթէ Աւարականում չ' ունէր բառի շեշտը իւր վերայ: Մենք արդէն գիտենք թէ ինչի համար է հարկաւոր մեզ այս նկատողութիւնը շեշտի մասին. օրինակ՝

Օ) փե (նու աղակ. Յովհաննէս—Օփանէս զօհ. Օփանիս) Օփայ
 Խոչի (նու աղակ. Խաչատուր անուների) Խոչայ
 Բայց Խայի (Խայի) — Խայ — օյ
 Ը) րդ օրեկերին Տեառամ են և Արդակ. այ վերջացած յատուկ անուն-
 ները՝ Մարբարոյ — Մարբար — օյ
 Կրեմեայ — Կրեմե — օյ, և այլն:

Այստեղ տեղն է նկատելու, որ դրականական լեզու ու մ
 և ուրիշ բարբառներու մ գործ ածվող յատուկ անուններին
 նու աղական էլ մասնիկը զօհերէնու մ կարցրել է է պահելով
 միայն է, օրինակ՝ Խաչիկ — զօհ. Խաչի (Համեմ տրիշ. բարբ.
 Խաչօ, Խէչօ), Օփիկ — զօհ. Օփի, Շու շանիկ — Շու շի, են.
 (Համ. Ղարար. Անքի — զօհ. Անքի): Բայց է (էլ — ից կր-
 ձնաւած) զօհերէնը, ուրիշ բարբառներին և լեզուներին նման,
 շատ ուրիշ միջոցներ ունի նու աղական անուններ կազմե-
 լու համար:

Ծանօթ. 2. Արովհեան Է վերջապետ թիւեր միենոյն՝ միայն կեր-
 պարանափոխված՝ այ է, այդ պատճառով մենք ուղղապար թեան հա-
 մար պահում ենք յ թեև նա է, արտասանվում ինչպէս և այ մէջ. Է
 հնչիւնը մենք նշանակում ենք Է և ոչ ո՛ նորա ու ից փոխված լինելը
 յոյց տալու համար (§ 5. ծան. 1):

Ծանօթ. 3. այ և օյ զանազանութիւնը ազգանուն կազմելու համար
 տես § 19, 4:

բ. Տեղի անոնները (երկրի, գլխի, քաղաքի) զօհերէնու մ
 վերջանում են Անական հարվում ու կամ է: Թ՛ւ, որ անունի
 համար որը այս վերջապետ թիւներին պիտի գործ ածվի,
 այդ զծվար է որոշել և կարծեմ հարկաւորութիւն էլ չը կայ,
 որովհետեւ ինչքան կարելի է նշմարել՝ մի և նոյն անոնի համար
 երկու վերջապետութիւններն էլ գործածական են, միայն հարկա-
 ւոր է աւելացնել որ 1) ու զլիսա որապէս ախրու մ է Ազու լի-
 ցոյ լեզու ու մ իսկ է — Յզնեցոյ. 2) և Ազու լեցոյ և Յզնեցոյ

լեզու ու մ էա կամ այ (կարգա ու) և է վերջացած տեղերի ա-
 նուններին Անականը անպատճառ վերջանում է ու (Համեմ.
 Հին Հայ. ոյ. Ուու սիա — Ուու սիոյ, Ղարգիւս — Ղարգիւյ,
 և այլն) իսկ սրան վերջացածները ունին Անականը զլիսա ո-
 թապէս է (ստան — ի), օրինակներ՝ Ասիա — Ասիա, Աւր-
 պա — Աւրպա, Յաղնայ — Յզնու, Ազա — Ազու¹⁾, Աստպի
 Աստպու, Հայաստան — Հայաստանի, և այլն:

5. Ժամանակ զոյց արդէ անոններէ Անականը վերջանում
 է ուայ, որը արտասանվում է վայ, ու սաի և զրվում է սոփ-
 բարար վայ: Այդ տեսակ բառերը վերջանում են այդպէս ոչ
 միայն զօհերէնու մ, այլ և ուրիշ բարբառներու մ նոյնպէս և
 դրականական լեզու ու մ օրինակ՝ տարի — տարվայ, օր — օր-
 վայ, և այլն: Այսպէսնայ այդ տեսակ անուններին Անականին
 տալիս է ուան²⁾ վերջապետ թիւեր և ոչ ուայ (վայ), ինչ-
 պէս է արեւելեան հայերէնու մը: Բայց և այս վերջինի բար-
 բառներու մ մենք պատահում ենք ուան (վան) ի տեղի ուայ
 (վայ), օրինակ՝ մի օրվայ համար, մի տարվայ համար, բայց
 նոյնպէս՝ մի օրվան համար, մի տարվան համար, այ. տար-
 վան օրս, մեյն քչսրվան մաջ (մի զիշերվայ մէջ), կան մինչև
 անգամ օրինակներ, որոնց մէջ ու զրակի լսվում է ան վերջա-
 պետութիւնը ստանց ու(վ)՝ քչսրան կէսը (զիշերվայ կէսը),
 տարան օրս, տարան հո ջա, հօի գսրսներվան կամ գսրսն-
 բան հստի, և այլն: Ժամանակ յոյց արդ բառերին Անա-
 կանը իսկապէս ուան (վան) համարելու է, որ կրճատվում է,
 (այն էլ ոչ ամեն ժամանակ) ուայ (վայ), այդ տեսակ կրճատ-

1) Յզնեցոյ 15 վերապահ արտասանութիւն ունեցող մի զիւր է. որի լեզուն այնուամենայ-
 նի ոչինչ նմանութիւն չունի զօհերէնի հետ. ստակի խառն է Թարբերէնի հետ. այդ
 զիւր հայերը գտնվում արևմտեայ Հայեր են:
 2) Այսպէսնայ. Գրական քերական արդէ հայերէն լեզուի. 28:

ման օրինակ է, և ազգէլ ըստի Սեռականը՝ ազգէլայ՝ ի տեղի՝ ազգէ-
կան: Այդ (ա)ան և նորանից կրճատուած (ա)այ վերջաւ ու-
րտ թիւնները յիշեցնում են մեզ անտիկանների ան և այ վեր-
ջաւ որտ թիւնները (ան, այ, հան, կայ)՝ երեկոյան, սաստ օ-
տեան, ժամանակայ, սյժմեան, կայլն:

Օրանգէ. ժամանակ ցոյց տվող բառերի Սեռականը աան (վան)
կամ աայ (վայ) վերջաւ որ. փոխարէն երբեմն ընդունում է իւր վեր-
ջաւ որտ թիւնը վերե յիշած կանոնների համեմատ:

բ. Յոգնակէ:

1. Եր — է: Այն անունները, որոնց յոգնակի Ուղղականը
վերջանում է աբ, եբ (§ 19, 1, 2) կազմում են իրանց Սեռա-
կանը աւելացնելով Ուղղականի այդ վերջաւ որտ թիւնների
վերայ է, որի սխալից աբ փոխվում է արդէն եբ (§ 2), այնպէս
որ Ուղղական՝ սար — ար, բայց Սեռակ՝ սար — եր — ի, թղթար
— թղթ — եր — ի, կայլն, կարաս — ն — եր, Սեռ. կարաս — ն —
եր — ի, և ն: Յոգնակի Ուղղականում + — ով վերջացած անուն-
ները կազմում են իրանց յոգնակի Սեռականը և միւս հոլով-
ները այնպէս, իբր թէ նորա վերջացած լինին Ուղղականում
եբ և ոչ +: Աւրեմն այն բառերը, որոնք եզակի Ուղղականում
ձայնաւորով են վերջանում (§ 19, 3) — այդ տեսակ բառերը՝
յոգնակի Սեռականը և մնացեալ հոլովները կազմելու հա-
մար՝ ընդունում են եբ վանկը, որի վերայ աւելացնում են հո-
լովն համեմատ վերջաւ որտ թիւն. այսինքն Սեռականի հա-
մար՝ ի, գործիականի՝ աւ. կայլն. և որովհետեւ այդ անուն-
ները վերջանում են ձայնաւորով, այդ պատճառով էլ բառի
և եբ — ի մէջ մտնում է ն. օրինակ քես ի, ադ. քստ ի, յոդ. Ուղ.
քստ ի — ք. բայց սեռ. քստ ի — ն — եր — ի, կատու — յոդ. ուղ.
կատու — ք, բայց սեռ. կատու — ն — եր — ի, կայլն:

Օրանգէ. Բնակիչների անուն նշանակող բառերը, որոնք վերջանում
են ադ. անց (ցղն. եցի) կամ ցն և կազմում են իրանց յոգնակի Ուղ-
ղականը + — ի միջոցով, յոգնակի Սեռականը և մնացեալ հոլովները
կազմելու հեն հետևում յիշեալ օրէնքին, այլ ընդունում են յոդ. Սեռ.
այ՝ անց (ցղն. եցի) վերջացածների համար, — ց՝ ցն վերջացածների
համար. օրինակ բզբլացի (ցղն. բզբլեցի) — Սեռ. յոգն. բզբլաց — անց
(ցղն. բզբլեցանց), Տընրկրտանցի — Սեռ. յոգն. Տընրկրտանց — անց, Ազբցի
— Ազբցուց. Հանչարիանցի — Հանչարիանցուց, Վանբցի Վանբցուց
կայլն: Յղնեցերէնում էցն (— ադ. անցի) վերջացածների համար էլ
յաճախ գործ է անվում այս վերջին (ուց) վերջաւ որտ թիւնը. օր-
նակ՝ Յղնեցի — Յղնեցաց և Յղնեցուց, կայլն:

2. (ա)ց, (ա)ց: Յոգնակի Ուղղականում ա+, ա+ (§ 19, 4)
վերջացող անունները կազմում են իրանց Սեռականը միայն +
փոխելով ց. ուրեմն այդ անունների Սեռականը լինում է, աց,
ա+ց՝ Բարդասարաբ — Սեռ. Բարդասարաց, Խաչատրուք —
Սեռ. Խաչատրուց, յիրաբ — յիրաց, նրուք — նրուց, միրուք —
միրուց, կայլն:

3. աց: Այս տեսակ վերջանում է այն անունների յոդ. Սեռա-
կանը, որոնք կազմում են իրանց յոգնակի Ուղղականը աբէ+,
արբէ+, անէ+, անե+, Էանե+ նոյնպէս և է+ — էլ (մարդէք = մարդիկ)
վերջաւ որտ թիւնների օգնութեամբ. սոցա + փոխվում է ց,
որի առջև երևում է ա (աց). այդ ա — ն տեղի է տալիս է
(համեմ. բնակիչների անուն ցոյց տվող բառերի յոգն. Սեռ.),
այնպէս որ ստանում ենք՝ սա — աց, ար — աց, ան — աց,
հան — աց, օրինակ՝ բսկրասախբ — բսկրասաաց, անարխբ —
անարաց, կնանխբ — կնանաց, ձխանբ — ձխանաց, զրեանբ —
զրեանաց, նոյնպէս մարդիբ (ի տեղի մարդիկ) — մարդկաց,
կայլն: Այս տեսակ վերջանում են և մի քանի ուրիշ բառեր,
որոնք + — ի առաջ ունին նոյնպէս յոգնակի նշանակող եբ, աբ
վերջաւ որտ թիւնները. օրինակ՝ ադ — ար — ք, ըն — ար — ք,
Սեռակ. ադ — ար — աց, ըն — ար — աց, կայլն:

§ 21. **Տրական և Հայցական հ:** Բնչապէս որ գրականականում մ' և ուրիշ բարբառներում, այնպէս էլ զօհերէնում այս հորովներէից ասածներ իւր վերջաւորութեամբ նման է Սեռականին, երկրորդը՝ շնչաւոր ասարկաների համար — Սեռականին, իսկ անշունչ ասարկաների համար — Աւղղականին, այնպէս որ այս հորովների մասին ասանքին խօսուող հարկաւորութիւն չը կայ, միայն յարուստ անուանելի վերաբերեալ հարկաւոր է նկատել զօհերէնի մի փոքրիկ զանազանութիւն գրականականից և ուրիշ բարբառներէից, մինչդեռ այս վերջիններում յատուկ անուանելի Տրական և Հայցական հորովները ընդունում են իրանց վերջից ցուցական ն յօլը, զօհերէնը է՛ է ընդունում այս հորովներում յիշեալ յօլը, օրինակ՝ գրակ ալեք այս զիրքը Աարապեհախն — ալ, ալահէլը) աս զիրքը Աարապեհայ, գրակ, և սեռայ Յովհաննէսին — ալ, իս ասհամ Օվանիսայ, և այլն:

Ծանօթ. 1. Այդ ն — ի վերաբերեալ նոյնը տեսնում ենք և ցուցական սա, դա, նա — զօհ, սօ, դօ, նօ գերանուններում, որոնց Տրականը և յաճախ նոյնպէս Հայցականը գրակ, սորան, գորան, նորան — զօհ, միշտ՝ սրօ, գրօ, նրօ:

Ծանօթ. 2. Մենք ասացինք թէ՛ շնչաւոր ասարկաների Հայցականը իւր վերջաւորութեամբ նման է Սեռականին (համեմատ. Սեռ.): բայց հարկաւոր է աւելացնել՝ եթէ այդ շնչաւոր ասարկան անորոշ է, այն ժամանակ գորա Հայցականը նմանում է Աւղղականին և ոչ Սեռականին, օրինակ այլ է՝ մարդ վարձեցի, ընկեր ճարեցի, ասաղակ սպանեցի, այլ է՝ մարդուն վարձեցի, ընկերիս հետացրի, ասաղակին սպանեցի, և այլն. նոյն տարբերութիւնը տեսնում ենք և զօհերէնում:

§ 22. **Բացասական հ:** Չօհերէնում այս հորովի կազմութեւն կանակը կարելի է բաժանել երկու՝ 1) Սեռականում է, ու (§ 20, 1, 2) վերջացած անունները կազմում են իրանց Բացասականը աւելացնելով ց Սեռականի այդ վերջաւորու-

թիւները վերայ, օրինակ՝ կատու, Սեռ, կատու — ի (կարդա՛ կատով — ի), Բացասական կատով — ի — ց, մօլոլ (մարդ), Սեռ, մարդու, բաց, մարդու ց, անասուններ, սեռ, անասունների, բաց, անասունների — ց, և այլն: Սեռականում է՛ էան վերջացածները աւելացնում են Բացասականում է՛ց՝ թեան — ից՝ փխտ թեան — ից, աղքատութեան — ից, և այլն: Յղնեցոյ լիզուն այս զէպքում հետեւում է ըստ մեծի մասին § 2 կանոնին, այնպէս որ՝ փխտութեանից, աղքատութեանից, և այլն: — Այս զէպքում, ինչպէս տեսնում ենք, զօհերէնը բացասութիւն է՛ է կազմում գրականականից և ուրիշ շատ բարբառներից (արեւելեան), ասելի բացասական երկայթ է՛ ներկայացնում մեզ հետեւալ երկրորդ զէպքը՝ 2) Սեռականում բոլոր միւս վերջաւորութիւնները (այ, իյ, ուայ, այ, ուց) ստացող անունները կազմում են իրանց Բացասականը աւելացնելով Սեռականի վերայ՝ հանի կամ հանից, օրինակ՝ Հայրապետայ հանի, կամ հանից, սրօ հանի կամ սրօ հանից, բլրբլրայց հանի (կամ հանից), գրուց հանի, և այլն: Կ՛նչ բան է այդ հանի և ի՛նչ ծագում ունի: Հնչա կարելի է նկատել, որ այդ բառը բաժանվում է երկու մաս, հան + ի կամ հան + ից, որոնց երկրորդ մասը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյն իսկ Բացասականի վերջաւորութիւնը — ից — ի (հան + ից) վերաբերմամբ այդ պարզ է, ինչ վերաբերում է է (հան + ի), կասկած չը կայ որ այդ է համարատաստանում է Բացասականի է վերջաւորութեանը, որ բացի հին հայերէնից գործածական է այժմեան հայ բարբառներում է՛ է՝ գլխատ որսաղէս արեւմտեան, տեղակը և արեւելեան: Այդ ենթադրութիւնը կարելի է հաստատել նորանոյ, որ երբեմն հան — է — ի փոխարէն գործ է ածվում հան — ալ, այսինքն՝ է փոխվում է ալ (§ 4), այդ փոփոխումը աւելի յատուկ է ցղնեցերէնին: Նոյն այդ վերջաւորութիւնը անսոյ մենք տեսնում ենք և Վարարազոց բարբառումը՝ բա-

խորց անայ, ինձանայ, միգանայ, և այլն¹⁾: Աւրեմն այդ բառի կրկնորդ մասը պարզ է և հասկանալի. խակ ստաճին վանկը (հան) մեկնելու համար հարկաւոր է նկատել որ սկզբի հ մի այնպիսի յաւելիւմ է ինչպէս և հինգիւր (ընկեր), հըրսն ուր (ալեւոր), և այլն բառերի մէջ, ստաւել որ այդ հանի կամ հանից զործ է ածուլով երբեմն ստանց հ, միայն՝ անի (կամ անայ), անից, ուրեմն բաց առնելով այդ հ մնում է ան, որ համեմատուլու է այն ան—ի հետ, որ տեսնում ենք գերանունների մէջ և ոչ միայն զօկերէնում, այլ և զբանասկանում և ուրիշ բարբառներում՝ ինձ—ան—ից, քեզ—ան—ից, նոր—ան—ից (—նորա—ան—ից), մեզ—ան—ից, ձեզ—ան—ից, զոց—ան—ից (—զոցա—ան—ից), զօկ. անձ—ան—ից, զրօ—ան—ից, զբոց—ան—ից, և այլն:

Ծանօթ. 1. Այդ ան վանկը (զօկ. հան, ան), մենք կը տեսնենք և Վործխականում մի քանի բարբառներում այդ վանկի մէջ — երբեմն կրճատուլով է. այնպէս որ՝ մեզանից—մեզնից, մեզ—ան—նով—մեզնով և մինակ մնացած ու փոխուլով է՝ մեզնով—մեզմով, որոնց—ան—ով—որոնցմով:

Ծանօթ. 2. Զօկերէնում մնացել են Վացատականի է (աւելի յաճախ՝ էն) վերջաւորութեան հետքերը. օրինակ՝ ազ. ստակ—ան (այստակից), ցլն. բստիզ—ան, ուր ան անշուշտ մի և նոյնն է ինչ որ գրականական էն (§ 4): Այդ վերջաւորութիւնը համեմատաբար աւելի յաճախ է լսուլով Յղնայի բարբառում: մորան, կլիան, և այլն (մորից, գլիից), համեմատ. Վարարացոց՝ մենան ընդալ այ, ընդեղան ետ այ տաւնում, տական, տեղան, ծեղբան, և այլն:

§ 23. Վործխական հ: Վործխական հորովը զօկերէնում վերջանում է ա—, որը՝ կթէ շեշտի տակ է ընկնում՝ փոխուլով է օ, այնպէս որ ա—օ՞: Աւրեմն այդ և § 1 հիման վերայ՝

է՞նէ Գործխական հորովը փոխանի բառ է վերջանում է օ՞ւ օրինակներ. ձնասպարհաւ, օթախաւ, տեղաւ, դեղաւ, և այլն. բայց՝ ձընրփօվ, թընամօվ, ջըրօվ, անօվ (զործ է ածուլով երբեմն և տանաւ), և այլն: Վործխականի այդ վերջաւորութիւնը մենք տեսնում ենք և Վարարացոց բարբառում¹⁾: Այն բառերը, որոնք իրանց Վացատականը կազմելու համար ընդունում են ան կամ հան (հան) վանկը, նոյն բառերը զործխական հորովը կազմելու համար էլ ընդունում են նոյն ան կամ հան վանկը: Ինչպէս Վացատականը կազմելու, այնպէս էլ այստեղ այդ վանկը աւելացուլով է Անականի վերջաւորութեան վերայ: Վերջով աւրեմն այդ վանկի վերայ Վործխականի ա— վերջաւորութիւնը, մենք կը ստանանք՝ Հայրատկոտց հանաւ (կամ՝ անաւ), զբոց անաւ, բղըրացոց հանաւ (կամ՝ անաւ), և այլն: Ահա տեսնուլով արժան է այն որ այդ ան կամ հան վանկը հորովի վերջաւորութեան հետ միասին ստամ (ան կամ հան—ի, հան—ից, հան—աւ, և ինչպէս կը տեսնենք՝ Արդոյոյսկանում՝ հան—ամ, ցլն. հան—ում) մի ինքնու բոյն բառ է ներկայացնում մեզ. այդ երևում է նորանից¹⁾ որ զաւելուում է Անականի վերայ, այսինքն՝ իրեն զոյսկան պահանջում է որ իրանից կախած զոյսկանը Անական հորովում գնվի²⁾ այդ Անականը, ինչպէս և մեզ հետաքրքրող բառը, ունին սակն մէկը իրանց շեշտը. այդ պարզ կարելի է տեսնել վերեւ բերած օրինակներից, նոյնպէս զարարացիներից՝ բախտոց անայ: Վարելի է, իմ կարծիքով, կեթաղրիլ թէ, այդ մասնիկը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի բառ, որ՝ պահելով իւր զոյսկութիւնը, կրցրել է արդէն իւր ինքնու բոյն նշանակուլովութիւնը և մնացել է ինչպէս հորով կազմող մասնիկ:

1) Патр. Паскад. о диалект. Арм. из. Երև. 68—69:

1) Патр. Паскад. о диалект. Арм. из. Երև. 68:

Ծանօթ. Ան կամ հան վանկի միջոցով Գործխական կազմող բառերը, երբեմն կազմում են և առանց այդ վանկի էլ՝ Պուզուս — օփ, գրուց — օփ, տարաւ, շքրանժան, կայլն:

§ 24. Մերճոյական հարմի վերջաւորութիւնն է, աճ, ուր ա շեշտի տակ ընկած ժամանակը փոխվում է ու՝ ու՛մ: Այդ ա — ի ու փոխվում մասին տես § 5 ծան. 3, § 1, § 6: Աւրեմն այդ վերջաւորութեան վերայ շեշտ եղած ժամանակը և ապա ուրեմն՝ է՛նէ՛ Սերգոյական հարմի մասին է՛նէ՛ տեղի աճ՝ Սերգոյականը վերջանում է ու՛մ. օրինակ՝ օքժախ — աճ, դեղ — աճ, չօլ — աճ, մարդ — աճ, կայլն, բայ՝ թշնամում, գլըք — ու՛մ, անում, կայլն: Սերգոյականի մասին ասածս վերաբերում է միայն Ազուլեցոյ լեզուին, ցնեցեցեքը շնեի բառովին աճ վերջաւորութեանը (§ 6, ծան.), նորանում գործածական է միշտ ու՛մ վերջաւորութիւնը: Ան կամ հան (ներդ. — ան — աճ, հան — աճ, ցին, ան — ու՛մ, հան — ու՛մ) վանկի միջոցով կազմում են իրանց Սերգոյականը նոյն բառերը, որոնք այդ վանկի միջոցով կազմում են իրանց Վայցասականը և Գործխականը:

Ծանօթ. Սերգոյականը երբեմն գործ է ածվում առանց վերջաւորութեան, օրինակ՝ Վոյնուլիս շատ մարդիք: Կօն (Ազուլիս կամ Ազուլիսում շատ մարդիկ կան): Այդ ուղղականաձև Սերգոյականը գործածական է քաղաքների և առհասարակ տեղի անունների համար: Նոյնը մենք տեսնում ենք գրականական լեզուում և ուրիշ բարբառներում:

§ 25. Վորդ մեր ասածներէցը հետևեալ մի աղիւսակ կարելի է գուրս բերել վերջաւորութիւնների համար.

Երկ:	I.	II.	III.	IV.	V.
Աւղլ. ի	թիւն	թեան	առանց որոշ վերջ.	յասուկ անուն	ժաման. նշան. ան.
Սեռ. ու	թեան	թեան	ի	այ (կամ ց) § 20, 4)	կայ կամ վան
Տրակ ու	թեան	թեան	ի	այ (կամ ց)	կայ կամ վան
Հայց. նման է Աւղլ. կամ Սեռ.	թեան կց (ցլ. թեանց)	նմ. Աւղլ. կամ Սեռ.	նմ. Աւղլ. կամ Սեռ.	նման է Աւղլ. կամ Սեռակ	կամ Սեռակ
Բայց. ուց	թեան կց (ցլ. թեանց)	կց	ու. (կամ օվ. § 23)	Սեռական — ան ի (ց)	կամ հանի (ց)
Գործ. աւ. (կամ օվ. § 23)	թեան աւ. (ց. թեան)	աւ. (կամ օվ. § 23)	աւ. (կամ օվ. § 23)	Սեռական	կամ հան
Ներդ. աճ (կամ ու՛մ § 24)	թեան աճ (ց. թեան)	աճ (կամ ու՛մ § 24)	աճ (կամ ու՛մ § 24)	Սեռական — անում	կամ հանում
Յ. 4.					
Աւղլ. ք	(ն)եր կամ ար	(ն)եր կամ ար	ք. (եթէ եղ. Աւղլ.	վերջ. ձայնաւոր.) և.	(ն)եր կամ ար (եթէ
Սեռ. (ն)եր — ի	(§ 19, 1)	ք. (ն)եր կամ ար	ք. (եթէ եղ. Աւղլ.	վերջ. ձայնաւոր.) և.	(ն)եր կամ ար (եթէ
Տրակ (ն)եր — ի					— բարձ.)
Հայց. նման է Աւղլ. կամ Սեռ.					ի ոչևոյց]
Բայց. (ն)եր — կց					
Գործ. (ն)եր — աւ.					
Ներդ. (ն)եր — աճ					
Ներդ. (ն)եր — աճ					

(ն)երում:

Առանձին վերջաւորութիւններ յոյն լատին համար.

Ազգակ. ուր, ար.	ատիր, արիր, անիր, անր, եանր:
Սեռակ. ուց, այ.	այ, այ, այ, այ, այ (§ 20, ը. ծան.):
Տրակ. ուց, այ.	այ, այ, այ, այ, այ:
Հայցակ. նման է Ազգականին կամ Սեռականին:	
Բացառ. Սեռական	անի (յ) կամ հանի (յ):
Պործ. Սեռական	անաւ կամ հանաւ:
Ներգոյ. Սեռական	անամ (չղն. անում) կամ հանամ (չղ. ում):

Օ Ր Ի Ն Բ Վ Ն Ե Բ.

I.

Ազգակ.

Յոգնակ.

Ազգակ. քամ -ի	քամի -ք):
Սեռակ. քամ -ու	քամի -ներ -ի:
Տրակ. քամ -ու	քամի -ներ -ի:
Հայցակ. քամ -ի	քամի -ք:
Բացառ. քամ -ուց	քամի -ներ -ից:
Պործ. քամ -աւ	քամի -ներ -ան:
Ներգոյ. քամ -ամ (չղն. ում)	քամի -ներ -ամ (չղն. ում):

II.

Ազգակ. թարաւորութիւն (§ 9)	թարաւորութիւն -ներ:
Սեռակ. թարաւորութեան	թարաւորութիւն -ներ -ի:
Տրակ. թարաւորութեան	թարաւորութիւն -ներ -ի
Հայցակ. թարաւորութիւն	թարաւորութիւն -ներ
Բացառ. թարաւորութեանից (չղն. թեւեւից)	թարաւորութիւն -ներ -ից
Պործ. թարաւորութեանաւ (չղն. թեւեւաւ)	թարաւորութիւն -ներ -ան:
Ներգոյ. թարաւորութեանամ (չղն. թեւեւամ)	թարաւորութիւն -ներ -ամ (չղ. ում):

III.

Ազգակ.

Յոգնակ.

1.		
Ազգ.	ուրման (պատ, պարխպ)	ուրման -ներ
Սեռ.	ուրման -ի ¹⁾	ուրման -ներ -ի
Տրակ.	ուրման -ի	ուրման -ներ -ի
Հայց.	ուրման	ուրման -ներ
Բաց.	ուրման -ից	ուրման -ներ -ից
Պործ.	ուրման -աւ	ուրման -ներ -ան
Ներգ.	ուրման -ամ (չղն. ում)	ուրման -ներ -ամ (չղ. ում):
2.		
Ազգ.	թօր (թուր)	թօր -եր (չղն. թօրաւ)
Սեռ.	թօր -ի	թօր -եր -ի
Տրակ.	թօր -ի	թօր -եր -ի
Հայց.	թօր	թօր -եր (չղն. թօր -աւ)
Բաց.	թօր -ից	թօր -եր -ից
Պործ.	թօր -աւ	թօր -եր -ան
Ներգ.	թօր -ամ	թօր -եր -ամ (չղն. ում):
3.		
Ազգ.	սօր (սար)	սար -ար
Սեռ.	սար -ի	սար -եր -ի
Տրակ.	սար -ի	սար -եր -ի
Հայց.	սօր	սար -ար
Բաց.	սար -ից	սար -եր -ից
Պործ.	սար -աւ	սար -եր -աւ
Ներգ.	սար -ամ (չղն. ում)	սար -եր -ամ (չղն. ում):
4.		
Ազգ.	կատու	կատու -ք
Սեռ.	կատու -ի	կատու -ներ -ի
Տրակ.	կատու -ի	կատու -ներ -ի
Հայց.	կատու կամ կատուի	կատուք կամ կատուների

¹⁾ Արձան - քանի որ ու -ի վերջը շեշտ կայ ու պարզ է բաժան միւս հոգնակներում շեշտը տեղափոխելով արձան արմանի. ու արդէն կիսաւ է հեշտ մ համարեալ ըրձանի:

	Եզակի.	Յոգնակի.
Բայ.	կատվ—ից	կատու—ներ—ից
Գործ.	կատվ—աւ	կատու—ներ—աւ
Ներգ.	կատվ—ամ (ցղն. ում)	կատու—ներ—ամ (ցղն. ում):

1.

IV.

Ուղղ.	Բաղդասար	Բաղդասար—ներ
Սեռ.	Բաղդասար—այ	Բաղդասար—ներ—ի
Տրակ.	Բաղդասար—այ	Բաղդասար—ներ—ի
Հայց.	Բաղդասար կամ Բաղդասարայ	Բաղդասար—ներ կամ ներ—ի
Բայ.	Բաղդասարայ անի(ց) կամ Հանի(ց)	Բաղդասար—ներ—ից
Գործ.	Բաղդասարայ անաւ կամ Հանաւ	Բաղդասար—ներ—աւ
Ներգ.	Բաղդասարայ անամ կամ Հանամ	Բաղդասար—ներ—ամ (ցղն. ում):

2.

Ուղղ.	Խաչատուր	Խաչատուր—ներ
Սեռ.	Խաչատուր—ոյ	Խաչատուր—ներ—ի
Տրակ.	Խաչատուր—ոյ	Խաչատուր—ներ—ի
Հայց.	Խաչատուր կամ Խաչատուր—ոյ	Խաչատուր—ներ կամ ներ—ի
Բայ.	Խաչատուրոյ անի (յ) ¹⁾	Խաչատուր—ներ—ից
Գործ.	Խաչատուրոյ անաւ	Խաչատուր—ներ—աւ
Ներգ.	Խաչատուրոյ անամ	Խաչատուր—ներ—ամ:

V.

Ուղղ.	Հարամ	Հարամ—ներ
Սեռ.	Հարամ—վայ	Հարամ—ներ—ի
Տրակ.	Հարամ—վայ	Հարամ—ներ—ի
Հայց.	Հարամ	Հարամ—ներ

1) Հեշտութեան համար մենք այսուհետեւ չ'ենք կրկնում: հանի(ց), հանաւ և ոչ ցղն. Ներգ. հորով ձեռ (ո-Տ):

	Եզակի.	Յոգնակի.
Բայ.	չըրամվայ անից ¹⁾	չարամ—ներ—ից
Գործ.	չըրամվայ անաւ	չարամ—ներ—աւ
Ներգ.	չըրամվայ անամ	չարամ—ներ—ամ:

Շանչի. ժամանակ յոյց տվող անունները հորովում են նոյնպէս ընդ հանուր կանոնին համեմատ, այսինքն՝ I (եթէ չ է վերջանում, օրինակ որդի) և III համեմատ:

§ 26. Առանցիկ օրինակներ մի քանի յոգնակի անունների:

1.

	1.	2.
Ուղղ.	Բաղդասար—ար ²⁾	Խաչատուր—ար ³⁾
Սեռ.	Բաղդասար—այ	Խաչատուր—ույ
Տրակ.	Բաղդասար—այ	Խաչատուր—ույ
Հայց.	Բաղդասար—այ	Խաչատուր—ույ
